

դրախտին ի նոցա մշակութեանն աջոյն տնկեսցին եւ ընկալցին զաւրինութիւն յԱստուծոյ: 27 Իսկ որք ոչն կամիցին տնկել նոքաւք, եւ ի նոյն հոգեւոր ցաւոյն գիտութենէ ըմպել, խոտան գտանիցին՝ մերձեալք յանէծս, եւ վաղջան նոցա լիցի յայրումն հրոյն: 28 Բազում անգամ վասն Տեառն լինիցին նոքա ի հեռ եւ ի նախանձ յանարժանացն. այլ կացցեն ի հաւատս անշարժ իբրեւ զվեմ, եւ յաղթեսցեն նոցա համբերութեամբ բազմաւ: 29 Եւ յետ նոցա թագաւորեսցէ ստութիւն, յապարասան յանձնասեր յարժաթասեր ի մտախաբ յանպատսպարան յանպիտան ի սուտակ եւ ի բանսարկու մարդկանէ. եւ ապա եթէ որ գտցի՝ որ եւ արասցէ ունել զուխտ հաստատութեան հաւատոյ հազիւ հազիւ: 30 Եւ զայս ամենայն լուեալ մանուկն Յուսիկ ի հրեշտակէն, միսիթարութեամբ մեծաւ գոհանայր զՏեառնէ Աստուծոյ, որ արժանի արար զնա այսպիսի յայտնութեան պատասխանւոյն. եւ զամենայն աւուրս կենաց իւրոց գոհանայր եւեթ յամենայն ժամ անդադար:

ԳԼՈՒԽ 2.

1 Յաղագս Գրիգորիսի՝ որդւոյ Վրթանայ, եւ նորուն վախճանին, եւ տեղին՝ ուր եղան:

2 Այլ վասն Գրիգորիսի եպիսկոպոսի, որդւոյ Վրթանայ, եղբարն Յուսկան, որ կաթողիկոսն էր կողմանցն Վրաց եւ Աղուանից, իբրեւ եկաց սա յիւրում պաշտամանն, մինչ դեռ մանուկն եւս էր, շինեաց նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ, եւ ձգեցաւ ի գաւառակողմանցն Ատրպատականի, քարոզ ճշմարտութեան հաւատոցն Քրիստոսի լինէր նա, եւ առաջի իսկ ամենեցուն էր սքանչելի եւ զարմանալի. խստագոյն եւ դժուարագոյն անհամարք ծանրաբեռն վարուցն կրթութիւնք խստամբերութեանն, պահաւք եւ սրբութեամբ, տքնական հսկմամբ անձանձրոյթ աղաւթիցն ջերմութեան առ Տէր Աստուած կանխելոյ վասն ամենայն մարդոյ: 3 Չաւետարանական ընթացսն եւ զվերակացութիւն եկեղեցւոյ սրբոյ շնորհաւքն Աստուծոյ առանց պակասութեան տանէր. առաւել եւս փութայր, գուն եղեալ յորդորելով զամենեսեան առ ի բարեացն քաջալերութիւն, զցայգ եւ զցերեկ պահաւք եւ աղաւթիւք եւ ուժգին ինդրուածովք եւ բարձրակալ կատարման հաւատովքն՝ մերձաւորաց եւ հեռաւորաց զհոգեւոր եռանդն ածէր. իբրեւ զպատերազմասէր նահատակ միշտ զանձն ի կրթութիւն եւ ի պատրաստութեան ունէր ամենայն փորձութեանց եւ վշտաց, առ ի տալ պատասխանի ամենայն համարձակութեամբ, վասն ճշմարտութեան հաւատոցն մարտնչել որ վասն Քրիստոսի:

4 Եւ իբրեւ ուղղեաց նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ, եհաս նա մինչեւ ի ճամբար բանակին Արշակունւոյ արքային Մազքթաց, որոյ անուն իւր Սանեսան կոչէր: 5 Քանզի եւ նոցա եւ Հայոց թագաւորացն մի